

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ
#7 - հոկտեմբեր 2013



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և գրադվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

Այս համարում կարդացեք՝

- *Ներկայացվեցին «Հաշմանդամություն ունեցող անձանց գրադվածությունը Հայաստանում. կարիքներ և խոչընդոտներ» հետազոտության արդյունքները*
- *Էրզոթերապիայի սկզբունքները տարածում են ստանում Հայաստանում*
- *«Մեքյորիթի դրիմը» իրականություն է դարձրել տասնյակ հաշմանդամների աշխատանք գտնելու երազանքը*
- *«Մայլակն արդեն տեղից շարժվել է, այն հնարավոր չէ կանգնեցնել...»*
- *Աշխատանքի տոնավաճառ Արարատի մարզում*
- *Կարգին սոցիալական տեսահոլովակ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժի մասին*
- *Ներառական մասնագիտական կրթությունը խթանող ծրագրեր*
- *«Զարտաչրինտ». Ուզում ենք օրինակ դառնալ մյուսների համար»*
- *«Ես ինձ այստեղ պահանջված եմ զգում: LIFE ծրագիրն ինձ 2-րդ կյանք պարգևեց...»*



**«ՄԵՅՎ ԴԸ ՉԻԼԴԻՆ»-Ը և ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑԻՆ
«ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԿԱՐԻՔՆԵՐ և ԽՈՉՐՆԴՈՏՆԵՐ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**



Հոկտեմբերի 29-ին «Մեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպությունը և Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) ներկայացրեցին «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. կարիքներ և խոչընդոտներ» հետազոտության արդյունքները: Միջոցառմանը ներկա էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Զեմմա Բաղդասարյանը, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն դոկտոր Քարեն Հիլհարդը, միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հետազոտությունն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի և Ականազերծման և ականների գոհերի աջակցության Միջազգային Հիմնադրամի (ITF) միջոցով Ավստրիայի Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող և ՄՄԿ-ի կողմից իրականացվող «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրում» ծրագրի շրջանակներում: Հետազոտությունն իրականացրել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վլադիմիր Օսիպովը:

Հետազոտության նպատակն էր վերհանել հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈԻԱ)՝ զբաղվածության հետ կապված կարիքները և խոչընդոտները: Հետազոտության ընթացքում կատարված բացահայտումները կօգնեն որոշում կայացնողներին ՀՈԱ-ների զբաղվածության հետ կապված իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության ձևավորման հարցում իրազեկ ընտրություն կատարելու հարցում, որի միջոցով, ի թիվս այլոց, կվերացվեն ՀՈԱ-ների աշխատանքի տեղավորման ճանապարհին առկա խոչընդոտները, կփոխվեն հասարակական վերաբերմունքն ու ընկալումները և նախաձեռնողական քայլեր կձեռնարկվեն զբաղվածության հարցում՝ առավել մեծ ուշադրություն հրավիրելով ՀՈԱ-ների կարիքներին: Ըստ մտահղացման այս ուսումնասիրությունը հանդիսանում է հիշյալ կարիքների ու խոչընդոտների բազային գնահատում:

Ներկայացվող առաջարկությունները բխում են *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին* կոնվենցիայից ու ՀՀ կառավարության ստանձնած միջազգային պարտավորություններից, ինչպես նաև համապատասխան ազգային փաստաթղթերով նախանշված գերակայություններից:

Հետազոտության արդյունքում առաջարկվում է նաև ստեղծել լայն իրավասություններով օժտված աշխատանքային խումբ՝ ապահովելու առավել սերտ համագործակցություն պետական գերատեսչությունների, գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև՝ զբաղվածության ոլորտում ՀՈԱ-ների առաջ ծառայած խնդիրների լուծման հետ կապված վերոհիշյալ առաջարկների իրականացումն արագացնելու նպատակով:

ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ապրող պաշտոնապես գրանցված 189000 հաշմանդամություն ունեցող անձանցից շատ քչերն են առնչվել էրգոթերապևտների հետ, մինչդեռ արտերկրում այս բնագավառի մասնագետներն են տանում ամենաակտիվ աշխատանքը բոլոր տարիքային խմբերի հաշմանդամների հետ:



Էրգոթերապիան, որը կրում է նաև «օկուպացիոն թերապիա» անվանումը, ուղղված է կենսական, առօրյա գործողությունների կատարման բարելավմանը, հիվանդությունների զարգացման կանխարգելմանը, ինչպես նաև կյանքի փոփոխություններին հարմարվողականության խթանմանը:

Էրգոթերապիայի կարևորագույն ուղղություններից մեկն է էրգոնոմիկան: Այն գիտություն է շահառուի կարիքներին համապատասխան աշխատավայրի հատուկ նախագծման և միջավայրի հարմարեցման մասին: Այս առումով չափազանց անհրաժեշտ է, որ աշխատանքի բերումով հաշմանդամների զբաղվածության խնդրի հետ առընչվող մասնագետները քաջ տեղյակ լինեն ինչպես էրգոթերապիայի, այնպես էլ էրգոնոմիկայի հիմունքներին: Խ.Արովյանի անվան մանկավարժական համալսարանում 2005 թ-ից բացվել է էրգոթերապիայի ֆակուլտետը, սակայն իրազեկման պակասի պատճառով այս մասնագիտությունը դեռևս չի գտել Հայաստանում իր լայն կիրառումը:

LIFE ծրագրի շրջանակներում օգոստոսի 19-ից 30-ը «Ունիսոն» ՀԿ-ի ջանքերով կազմակերպվեցին երկօրյա դասընթացներ ԶՊԾ (Զբաղվածության պետական ծառայություն) և ՀՀ ԲՄՓ (Բժշկասոցիալական փորձաքննություն) գործակալությանների աշխատակիցների, ինչպես նաև LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների սոցիալական աշխատողների համար:

Դասընթացը վարեց էրգոթերապիայի մագիստրոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիաննա Հարությունյանը, որը արհեստավարժորեն ներկայացրեց իր մասնագիտության սկզբունքները, կիսվեց Հայաստանում և արտերկրում ձեռք բերված փորձով: Մասնավորապես, դասընթացավարը ծանոթացրեց մասնակիցներին էրգոթերապիայում կիրառվող տարբեր գնահատման գործիքներին և լուծում առաջարկեց դասընթացի ընթացքում ծագած մասնագիտական հարցերին: Իսկ



հարցերը հիմնականում վերաբերում էին աշխատատեղի հարմարեցման ոլորտին և դա պատահական չէ, քանի որ պետության կողմից աջակցվող ծրագրերից մեկը՝ հաշմանդամություն ունեցող անձի աշխատատեղի հարմարեցման ծրագիրն իրականացվում է հենց այս երկու գործակալությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Շատ ցանկալի կլիներ, որ ապագայում և ԲՄՓ և ԶՊԾ գործակալություններում աշխատեին էրգոթերապևտներ, սակայն մինչ այդ դասընթացին ներկա եղած մասնակիցները հաջողությամբ կկիրառեն ստացած գործիքները և գիտելիքները իրենց աշխատանքներում:

«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԴՐԻՍԸ» ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՐՁՐԵԼ ՏԱՄՆՅԱԿ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ



Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժը մեր երկրում դեռ չի գտել իր լայն կիրառումը, այնուհանդերձ տարեցտարի ոչ խտրական քաղաքականություն որդեգրած ընկերությունների թիվը աճում է: Հատկապես մեծ առաջընթաց նկատվեց 2012թ.-ից, երբ մեկնարկեց LIFE ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին բազմաթիվ կլոր-սեղաններ, աշխատատեղերի տոնավաճառներ, քարոզարշավներ, այլ միջոցառումներ:

Եթե 8 տարի առաջ հաշմանդամներին աշխատանքի տեղավորման գործընթացը ասոցացվում էր միայն Վիվասել-ՄՏՄ-ի և HSBC բանկի հետ, ապա 2013թ. դրությամբ ցանկը բավականին ընդլայնվել է՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, «Օրանժ-Արմենիա», «Արմենթել», «Վիվառո», «Տոսպ» և այլոք: Այս միտումը կապված է բազում գործոնների հետ՝ իրազեկման բարձրացում, գործատուների խրախուսմանն ուղղված պետական աջակցության ծրագրեր, մասնագիտական հմտությունների ձեռքբերում, հաշմանդամների մտածելակերպի փոփոխություն և այլն:

2013թ. վերոնշյալ ցանկը համալրվեց ևս մեկ՝ «Սեքյուրիթի դրիմ» կազմակերպությամբ: Կազմակերպությունը զբաղվում է Հայաստանում ճանապարհային երթևեկության տեսահսկմամբ և առաջնային պահանջը՝ երթևեկության կանոնների փայլուն իմացությունն է և համապատասխան քննության հանձնումը: Առաջին բանակցություններն այս ընկերության և LIFE ծրագրի գործընկեր «Ունիսոն» ՀԿ-ի ղեկավարների միջև տեղի ունեցան 2012թ.-ի նոյեմբերին, որի ընթացքում ձեռք բերվեց շարունակական համագործակցության պայմանավորվածություն և արդյունքները երկար սպասել չստիպեցին: Արդեն իսկ 2013թ.-ի մայիսին առաջնային պահանջներին (համակարգչային բավարար գիտելիքներ, տեսողության և ձեռքերի հետ կապված խնդիրների բացակայություն) համապատասխանող անձանց համար անցկացվեց քննություն և մրցութային կարգով 6 հաշմանդամություն ունեցող անձ ընդունվեց «Սեքյուրիթի դրիմ»: Վերջիններիս հավաստմամբ, արդեն իսկ աշխատանքային պրակտիկայի օրերին իրենց պարզ դարձավ, որ բացի ֆինանսական վաստակից նրանք նաև «շահեցին» ջերմ գործընկերական շրջապատ: Առանց որևէ քանակային սահմանափակման՝ գործատուն նշանակեց քննություն ևս մեկ խմբի համար: Ինչպես առաջին քննությունը, այնպես էլ երկրորդն անցկացվեց «Ունիսոնում»: Այս անգամ քննությանը մասնակցող 15 անձանցից զբաղվածության հեռանկար բացվեց ևս 5 հաշմանդամների համար:

«Սեքյուրիթի դրիմի» տնօրեն Վահագ Ադանիկյանը իր հետ ունեցած զրույցում նշեց, որ հաշմանդամություն ունեցող բոլոր աշխատակիցները լիարժեք ներառվեցին աշխատանքային միջավայր և մասնագիտական պարտականությունների կատարման առումով չեն զիջում իրենց գործընկերներին: Կարծում եմ, եթե Հայաստանի գործատուների մեծ մասը դրսևորի նման քաղաքականություն հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդրի հանդեպ՝ այն այլևս «չլուծվող» խնդիրների ցանկում հանդես չի գա: Այս պարագայում կշահեն ինչպես տվյալ անձինք, այնպես էլ պետությունը:

Մարիաննա Չալիկյան

«ՄԱՅԼԱԿՆ ԱՐԴԵՆ ՏԵՂԻՑ ՇԱՐԺՎԵԼ Է, ԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ...»

Օգոստոսի 21-ին, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի հետ միասին անցկացրեց հանդիպում Լոռու մարզկենտրոն Վանաձորում՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին: Հանդիպմանը մասնակցում էին տարածքային կառավարման, միջազգային ու տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ, լրատվամիջոցներ:

Հարկ է նշել, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունն արձանագրել է նշանակալի հաջողություն՝ դառնալով օրինակելի ողջ երկրում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծման առումով:

Ներկայումս Արտակարգ իրավիճակների նախարարությունում աշխատում են հաշմանդամություն ունեցող շուրջ 30 անձինք՝ վայելելով մատչելիություն ու հարմարավետություն, որն ապահովվել է նախարարության շենքում:



«Հաշմանդամություն ունեցող անձանց /ՀՈԻԱ/ հանդեպ վերաբերմունքն ու նրանց աջակցելու պատրաստակամությունը կարելի է իսկական նվաճում համարել», - ասաց «Փարոս» ՀԿ նախագահ Սուրեն Օհանյանը:

«Մայրակը տեղից շարժվել է և ոչ ոք չի կարող այն կանգնեցնել», - ասաց նախարար Երիցյանը: Նա պատրաստակամություն հայտնեց լսելու ներկաների կարծիքները և առաջարկները՝ խոստանալով դրանք բարձրաձայնել կառավարությունում:

Հանդիպման ժամանակ խոսվեց ՀՈԻԱ զբաղվածության նոր ծրագրերի մասին, որոնք իրականացվելու են Լոռու մարզում, թե՛ երկու նախարարությունների և թե՛ LIFE ծրագրի կողմից:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը կարծիք հայտնեց, որ իրականում հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ոչ թե օգնության, այլ հավասար աշխատանքային հնարավորությունների ստեղծման խնդիր, որպեսզի իրենք ևս կարողանան լիարժեք իրացնել իրենց կարողությունները և հասարակության լիարժեք անդամ զգալ: **«Մա նշանակում է, որ վաղը շատ ավելի լավ իրավիճակ ենք ունենալու, շատ ավելի մատչելի միջավայր»**, - եզրափակեց պարոն Ասատրյանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 29-ին Արարատի մարզի Արտաշատ քաղաքում տեղի ունեցավ աշխատանքի տոնավաճառ: Տոնավաճառին մասնակցում էին 28 գործատուներ, որոնք ներկայացրեցին 66 առկա և 23 սպասվելիք թափուր աշխատատեղեր: Կարևոր էր աշխատանք փնտրողների ակտիվությունը /շուրջ 400 մասնակից/, բայց առավել ուրախացնող էր հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) հետաքրքրվածությունն ու ակտիվությունը:

Աշխատանքի տոնավաճառներ կազմակերպվում են 2007թ-ից սկսած ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության նախաձեռնությամբ: Հարկ է նշել, որ արդեն երկրորդ տարին է «Հյուսիսի դիվիզիոնի ընդ փիս» հիմնադրամը «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» /LIFE/ ծրագրի շրջանակներում իր գործընկերային մասնակցությունն է ունենում իր պատասխանատվության մարզերում աշխատանքի տոնավաճառների առավել արդյունավետ կայացմանը: Օգոստոսի 29-ի տոնավաճառը ևս բացառություն չէր: LIFE ծրագրի աջակցությամբ հնարավոր դարձավ Արարատի մարզի այլ քաղաքներում բնակվող ՀՈՒԱ-ների մասնակցությունը տոնավաճառին: «Հյուսիսի դիվիզիոնի ընդ փիս» հիմնադրամի LIFE թիմի համար շատ ուրախալի էր տեսնել հաշմանդամություն ունեցող մասնակիցների ակտիվությունը, մանավանդ որ նրանցից շատերին արդեն ծանոթ էին ծրագրի շրջանակներում իրականացված «Կյանքի հմտություններ և աշխատանքի պատրաստվածություն» դասընթացներից: Եվ առավել կարևոր էր տեսնել, որ այս մարդիկ օգտագործում են դասընթացներից ձեռք բերած հմտությունները՝ թե՛ ռեզյումեների կազմում, թե՛ գործատուին ինքնաներկայացումը:



Եվս մեկ փաստ, այս անգամ գործատուների առնչությամբ: Պաշտոնական մասում «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետի, Արարատի փոխմարզպետի և Արտաշատի զբաղվածության մարզային կենտրոնի տնօրենից բացի ողջույնի խոսքով հանդես եկավ «Հրաչ և Անահիտ» ՄՊԸ-ի տնօրենը: Այս գործատուն, որի մոտ արդեն աշխատում են հաշմանդամություն ունեցող անձինք, ոչ միայն պատրաստակամություն հայտնեց հնարավորության դեպքում աշխատանքի վերցնել ՀՈՒԱ-ների, այլ իր գրած բանաստեղծությամբ կոչ արեց մյուս գործատուներին անտարբեր չմնալ ՀՈՒԱ զբաղվածության խնդրին:

Տոնավաճառի ընթացքում այլ գործատուներ ևս առանձնացվեցին: Գործակալության պետ Արտակ Մանգասարյանի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին Արարատի մարզի զբաղվածության կենտրոնների հետ ակտիվ համագործակցող թվով երեք գործատուների: Պարոն Մանգասարյանը հույս հայտնեց, որ մարզի գործատուների հետ գործակցությունն էլ ավելի արդյունավետ և բազմաշերտ կլինի:

ԿԱՐԳԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ



LIFE ծրագրի կարևորագույն ուղղություններից մեկը հանրության իրազեկումն է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժի վերաբերյալ: Իսկ իրազեկման արդյունավետ միջոցը սոցիալական տեսահոլովակն է: LIFE ծրագրի շրջանակներում «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը արդեն իսկ պատրաստել և հանրությանն էր ներկայացրել երկու տեսահոլովակ: Բոլոր տեսահոլովակներում հաշմանդամների զբաղվածության թեման ստացել է իր յուրովի մեկնաբանումը և, ըստ արձագանքների, երկուսն էլ շատ նպատակային և ազդեցիկ են:

Իսկ 2013թ հուլիսին պատրաստված երրորդ տեսահոլովակը նկարահանվել էր հանրաճանաչ դերասաններ Հայկ Մարությանի և Մկրտիչ Արզումանյանի (Հայկո-Մկո) մասնակցությամբ: Ի դեպ, դերասանները նկարահանվել են բարեգործական հիմունքներով: Նկարահանումները կատարվեցին Կարգին TV-ի կողմից: Տեսահոլովակում սովորույթին հակառակ, հաշմանդամության թեման ներթափանցվում է հումորային տարրերով, որոնք սուր հակադրություն են ստեղծում գովազդի կուլմինացիոն հատվածի հետ: «Ես կարող եմ աշխատել» խորագիրը կրող այս հոլովակը ոչ միայն ուղղում է ուշադրությունը հաշմանդամների աշխատանքային ներուժի վրա, այլ նաև ստիպում է դիտողին մտորել իրական արդարության մասին: Կարգին TV-ի սոցիալական գովազդը սեպտեմբեր ամսից ներկայացվում է Հանրային հեռուստատեսությամբ և Հայկական 2-րդ հեռուստաալիքներով, սակայն ինտերնետն արդեն իսկ ապահովել է այս տեսանյութին մեծ ճանաչում՝ Youtube-ում 1 ամսվա ժամանակահատվածում արձանագրվել է 90000-ից ավել դիտում http://www.life-disability.am/LIFE_PSA_s_arm.html Դիտողներից շատերը նաև մեկնաբանությունների հատվածում կիսվել են իրենց տպավորություններով. «Փշաքաղվեցի... արդեն մի քանի օր է սկսել եմ հավատալ, որ իմ և շատերի ապագան կարող է փոխվել» կամ «Բրավո, բրավո ևս մեկ անգամ բրավո. գովազդ, որը կարելի է նայել կրկին ու կրկին ու մեծ հաճույքով»: Գովազդի հաջողված լինելու գրավականը դիտողի կողմից կրկին դիտելու ցանկությունն է: «Քանակը տալիս է որակ» ասացվածքը այս պարագայում շատ տեղին է և միայն մեծաքանակ դիտումները կարող են նպաստել հասարակության պատկերացումների փոփոխմանը:



LIFE ծրագրի շրջանակներում, 2013 թ. հունիսից մինչև 2014 թ. հուլիսը «Մեյվ դը չիլդրենը» կազակցի հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների (ՀՌԻԱԿ)/ՀԿ-ների և նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 14 ծրագրերի իրականացմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՌԻԱ) համար ուսումնական/աշխատանքային միջավայրը բարելավելու, շուկայական պահանջարկ ունեցող նոր ծրագրեր մշակելու, ինչպես նաև ՀՌԻԱ ինտեգրմանը, մասնագիտական վերապատրաստմանն ու վերականգնմանը նպաստող ներառական միջավայր ստեղծելու նպատակով:

Ծրագրերն իրականացվում են Երևանում և LIFE ծրագրի 4 թիրախ մարզերում: Ծրագրերի շրջանակներում գործընկեր կազմակերպությունները հաշմանդամություն ունեցող անձանց առաջարկում են երկարաժամկետ և կարճաժամկետ կրթության հնարավորություն հետևյալ մասնագիտություններով.

1	Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ	«Համակարգչային գործավարություն և օպերատորություն»	հոկտեմբեր 2013 – հունվար 2014	Երևան, Թրիլիսյան խճուղի 3/1 Հեռ.՝ 28-57-82, 28-56-12 Էլ. հասցե՝ info@yerevancollege.am Կայքէջ՝ www.yerevancollege.am
		«Հաշվապահություն»	մարտ-մայիս 2014թ	
2	Երևանի տարածաշրջանային N2 պետական քոլեջ	«Հաշվապահական հաշվառում» «Համակարգչային գործավարություն» «Վարսահարդարում» «Դիմահարդարում»	փետրվար-մայիս 2014թ.	Երևան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական փող., 37ա Հեռ.՝ 67-23-01, 077-70-60-50 Էլ. հասցե՝ n2college@mail.ru Կայքէջ՝ www.college2.info

		«Դերձակություն» «Խոհարարություն»		
3	«Սկարպ» առողջական կենտրոն ՀԿ-ն Արարատի Պետական Քոլեջի հետ համագործակց ությամբ	«Համակարգչային դասընթացներ»	փետրվար-մայիս 2014թ.	Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբանցք, 10 Հեռ.՝ 010 35 02 91, 055 35 02 91 Էլ. հասցե՝ info@skarp.am Կայքէջ՝ www.skarp.am
				Արարատի Պետական Քոլեջ՝ հեռ. 0234 4 41 01, հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67
4	«Ուղեկից» ՀԿ-ն Երևանի Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի հետ համագործակ ցությամբ	«Փայտի գեղարվեստական մշակում»	նոյեմբեր – դեկտեմբեր 2013թ.	Երևան, Խաղաղ Դոնի 23 Հեռ.՝ 44-38-04 Էլ. հասցե՝ ughekie.ngo@rambler.ru
				Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ ք. Երևան, Արշակունյաց պող., 39, հեռ. 010-44-25-42
5	«Փրկություն» Հաշմանդամ երեխաների և երիտասարդնե րի կենտրոն ՀԿ	1.«Կավագործություն» 2. «Դիզայն» 3. «Ձեռագործություն և մաքրամե»	հունվար-հուլիս 2014թ.	Երևան, Չեխովի 33 Հեռ.՝ 49-93-13, 42-78-50, 098 51- 38-69 Էլ. հասցե՝ prkutyun@mail.ru Կայքէջ՝ www.prkutyun.am
6	Հաշմանդամներ ի «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն՝ ՀԿ-ն “Art-house” ուսումնական կենտրոն	«Ծաղկարվեստ»	դեկտեմբեր 2013 – հունվար 2014	Երևան, Բաղյան 2 Հեռ.՝ 66-41-01, (093)173-173 Էլ. հասցե՝ paros@web.am
«Տիկնիկագործություն»		հունվար – ապրիլ 2014		
«Դերձակություն»		հունվար – ապրիլ 2014		
7	Շիրակի տարածաշրջան ային պետական քոլեջ	«Հաշվապահություն» «Համակարգչային օպերատորություն» «Վարսահարդարում» «Ճլորիստիկա» «Խոհարարություն»	նոյեմբեր 2013	Գյումրի, Մանուշյան փ., 4-րդ թաղամաս, թիվ 30 Հեռ.՝ +374 312 3-12-98 Էլ. հասցե՝ emmaaac@mail.ru

«ԶԱՐՏՊՐԻՆՏ». ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ՕՐԻՆԱԿ ԴԱՌՆԱԼ ՄՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ...»



«Զարտապրինտ» ՄՊԸ-ն հիմնադրվել է 2012 թ. մայիսին և ղեկավարվում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից, ովքեր 1999 թվականից զբաղվում են խմբագրական, տպագրական և հրատարակչական աշխատանքով և համակարգչային դիզայնով:

Ընկերության նպատակներից մեկը հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի հնարավորություն ստեղծելն է: Հենց այս առաքելությամբ է ստեղծվել ընկերությունը, որով առանձնանում է մյուս

բիզնես նախաձեռնություններից Հայաստանում: «Զարտապրինտ»-ն իրականացնում է թվային (լազերային) տպագրություն և ձևավորման աշխատանքներ:

«Կարծում ենք, որ 12-ամյա մեր աշխատանքային փորձը խմբագրման, տպագրության և համակարգչային դիզայնի ոլորտում կօգնի մեզ հաջողության հասնել մեր նախաձեռնության մեջ: Մենք սիրում ենք մեր աշխատանքը և մեծ հաճությամբ ենք այն անում», - նշում է «Զարտապրինտ» ՄՊԸ գործադիր տնօրեն Զարուհի Բաթոյանը: 2013թ.-ին LIFE ծրագրի շրջանակներում իրականացվող նախաձեռնության արդյունքում ընկերությունը աշխատատեղ է ստեղծել հաշմանդամություն ունեցող ևս 3 անձանց համար:

«Երբ աշխատանքի հայտարարությունը տեղադրեցինք տարբեր կայքերում, առաջին իսկ օրվանից սկսեցինք ստանալ բազմաթիվ ինքնակենսագրականներ: Սակայն շուտով հասկացանք, որ մարդիկ պարզապես չեն կարդացել հայտարարությունը, որտեղ հստակ նշված էր, որ աշխատատեղի մրցույթը միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար է: Արդյունքում պարզեցինք, որ նրանցից հաշմանդամություն ունեն միայն տասը»,-նշում է տպագրատան համահիմնադիր Արտակ Համբարձումյանը:

Համագործակցելով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ՝ «Զարտապրինտ»-ը նախատեսում է կազմակերպել նաև աշխատանքային պրակտիկա աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող այն անձանց համար, ովքեր հետաքրքրված կլինեն տպագրական գործով (ձևավորում, էջկապություն և այլն):

«Մա առաջին դրամաշնորհային ծրագիրն է, որին դիմել ենք և որը մեծ փորձառություն կլինի մեզ համար: Ամենակարևորը, որ մենք սովորելու և բիզնես ոլորտում զարգանալու հնարավորություն ունենք, որը մեզ ընձեռում է LIFE ծրագիրը,- նշում է Զարուհի Բաթոյանը,- հույս ունենք, որ մեր փորձը կդառնա հաջողված նախադեպ Հայաստանում գործող բազմաթիվ մեծ և փոքր տպագրատների համար:

Քանի որ ոլորտը թույլ է տալիս ամենատարբեր դժվարություններ ունեցող անձանց ներգրավել աշխատանքային գործընթացում»:

**«ԵՍ ԻՆՁ ԱՅՍՏԵՂ ՊԱՀԱՆՁՎԱԾ ԵՄ ԶԳՈՒՄ:
LIFE ԾՐԱԳԻՐՆ ԻՆՁ 2-ՐԴ ԿՅԱՆՔ ՊԱՐԳԵՎԵՑ...»**

**«Տղաս Ռուսաստանում է ապրում, ինձ կանչում է
իր մոտ, բայց չեմ գնում: Ես ինձ այստեղ
պահանջված եմ զգում, իսկ այնտեղ ո՞վ կլինեմ»,
- ասում է 49 ամյա Թամարա Հակոբյանը:**

Թամարան Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղից է: Նախկինում աշխատել է Սևանի այլուրի – համակցված կերերի արտադրամասի լաբորատորիայում՝ որպես տեխնոլոգ: Արտադրամասը գործել է մինչև 2000 թվականը, այնուհետ լուծարվել, աշխատակիցներն էլ համալրել են գործազուրկների շարքերը:

2007 թվականից տիկին Թամարայի մոտ սկսվել են լուրջ առողջական խնդիրներ. արդյունքում ձեռք է բերել հաշմանդամության 3-րդ խումբ: **«Շատ դժվար էր առանց աշխատանքի, շատ վատ հոգեվիճակում էի, չաշխատելը կրկնակի վատ էր անդրադառնում հոգեվիճակիս վրա, շատ ագրեսիվ էի դարձել, ինձ անգամ սևեռուն մտքեր էին հետապնդում: Հոգեբանի խորհրդով որոշեցի նորից աշխատանքի անցնել, դուրս գալ տնից, շփվել, մարդկանց հետ»**, - հիշում է մեր պատմության հերոսուհին:

2012-ին հաշվառվում է Սևանի Զբաղվածության տարածքային կենտրոնում՝ որպես աշխատանք փնտրող: Կենտրոնում Թամարային ասում են «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության ձեռնարկած հաշմանդամություն ունեցողների աշխատանքի տեղավորմանն ուղղված LIFE ծրագրի մասին: Որոշ ժամանակ անց, նա նաև մասնակցում է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ծրագրային գործընկեր «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից անցկացված «Կյանքի հմտություններ» դասընթացին:

Շատ շուտով Թամարա Հակոբյանն աշխատանքի է անցնում կաթի արտադրությամբ զբաղվող «ԱրաԱրեգ»-ՍՊԸ-ում՝ որպես կաթի տեխնոլոգ:

Իր նոր աշխատանքից գոհ է: **«Չեմ նկատում, ինչպես է անցնում աշխատանքային օրս: Կուլեկտիվն իմ երկրորդ ընտանիքն է: Գործատուն էլ բարի է և հոգատար»:** Բարձրացրել է աշխատավարձը և հոգում է տրանսպորտային հարցերը. առավոտյան իր մեքենայով է աշխատանքի տանում տիկին Թամարային:

Թամարան ոգևորված է LIFE ծրագրի շնորհիվ իր կյանքում տեղի ունեցած փոփոխություններով: **«Չեք պատկերացնի իմ ուրախությունը, երբ զբաղվածության կենտրոնի օգնությամբ աշխատանքի տեղավորվեցի»**, - հուզմունքը հազիվ զսպելով՝ ասում է Թամարան: **LIFE ծրագիրն ինձ 2-րդ կյանք պարգևեց, ես նորից վերապրեցի աշխատանքի բերկրանքը, ես ինձ պիտանի մարդ եմ զգում, զգում եմ, որ ինչ որ բան կարող եմ անել սեփական ուժերով և դա ինձ անսահման ուրախություն է պարգևում:»**

Երեք թոռնիկների տատիկին զարմացնում են այն մարդիկ, ովքեր կասկածելով սեփական ուժերին՝ պատճառաբանում են աշխատատեղ չլինելն ու գերադասում թոշակն աշխատավարձին: **Չեմ պատկերացնում, որ մի օր կարող եմ նստել տանն ու այլևս չաշխատել**, - գրույցի ավարտին ասում է տիկին Թամարան ու շտապում պատրաստվել նոր աշխատանքային օրվան:

Լուսինե Սարգսյան

2012թ-ի հունվարից մինչ օրս

188

հաշմանդամություն ունեցող անձ
տեղավորվել է աշխատանքի

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



Save the Children

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org

Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am



facebook



youtube